ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ/ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ/ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով դիմում եմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ վարկ ստանալու նպատակով և տալիս եմ իմ համաձայնությունը, և թույլատրում եմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ) մշակել իմ անձնական տվյալները, այդ թվում՝ իմ անունից հարցում կատարել՝

- **«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ),** ստանալ իմ անձնական տվյալները, այդ թվում՝ հանրային ծառայության համարանիշի/հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի տվյալները, մշակել իմ անձնական տվյալները՝ պայմանագրային հարաբերություններ հաստատելու նպատակով կնքվելիք պայմանագրի գործողության ընթացքում:

-**««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին,** ինչպես նաև իմ աշխատանքի վայր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ տեղեկատվական համակարգերին, և նաև վերջիններիս խնդրում եմ Բանկին տրամադրել իմ անձնական տվյալները պայմանագրային հարաբերություններ հաստատելու նպատակով կնքվելիք պայմանագրի գործողության ընթացքում:

Սույնով հավաստում եմ, որ տեղեկացված եմ Բանկի Տնօրինության 07.08.2020թ. թիվ 237 որոշմամբ հաստատված ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից Ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններ և կանոններ /հրապարակային օֆերտա/»-ում ներկայացված Ծանուցման /այդ թվում՝ անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման / դրույթներին և տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի/հետ կանչի իմ անձնական տվյալները, համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

Իմ անձնական տվյալները մշակվելու են՝ Բանկի հետ պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է իմ կողմից տրված, և Բանկը ստանում է իմ անձնական տվյալները մշակելու իրավունք՝ իմ և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող կազմակերպություններին տրամադրելու նպատակով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը և թույլատրում եմ Բանկին իմ անունից հարցում կատարել **«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին՝** ստանալ իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև այլ տվյալներ, մասնավորապես կատարելու վարկային հարցումներ հետևյալ նպատակներով՝

- **Նոր վարկային դիմում-** նոր վարկային պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս **/սույն հարցումը ազդում է սքոր գնահատականի վրա/,**
- **Գործող վարկի մոնիտորինգ-** վարկային պայմանագիր կնքելու դեպքում՝ վարկային պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում **/սույն հարցումը չի ազդում սքոր գնահատականի վրա/:**

Տեղեկացված եմ, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին իրականացվող «Նոր վարկային դիմում» հարցումը բացասական ազդեցություն կունենա ֆինանսական կառույցների կողմից կիրառվող սքորինգային համակարգերում ձևավորվող իմ վարկային ամփոփ գնահատականի վրա:

Վարկի սպասարկման գործընթացը կազմակերպելու համար վերը նշված երկու նպատակներով կատարվող հարցումները համարվում են պարտադիր վարկային պայմանագրի կնքման և գործողության ամբողջ ընթացքում:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, գործարար հարաբերություն սկսելու ընթացքում Բանկի կողմից ներկայացրած և գործարքներ իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, այդ թվում պայմանագրերը իմ կողմից կարող են ստորագրվել հետևյալ երեք տարբերակներով՝ մեխանիկական ստորագրության միջոցով՝ օգտագործելով Բանկի կողմից տրամադրվող էլեկտրոնային ստորագրման պլանշետները, ինչպես նաև մեկանգամյա գաղտնաբառը Բանկի կողմից ստուգված հեռախոսահամարին ուղարկելու միջոցով: Սույն մասում նշված ստորագրության երեք միջոցների կիրառումը կհանդիսանա իմ կողմից դրված բնօրինակ ստորագրություն[1]:

Անձնական տվյալների մշակման համաձայնություն տալով, համաձայնվում եմ նաև Օնլայն վարկավորման ընթացքում վեճը լուծել արբիտրաժային դատարանում: Վեճի լուծման այլ կարգ նախընտրելու դեպքում կարող եք մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

---

[1] Սարքի միջոցով էլեկտրոնային ստորագրությունը փոխարինում է ձեռագիր ստորագրությանը, ապահովելով փաստաթղթի վավերությունն ու անվտանգությունը: Սարքում պահվում է օգտագործողի գաղտնի բանալին, որն օգտագործվում է ստորագրության ստեղծման և ստուգման համար՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը: